

մունքները: Առ այս կարեւոր երեւցածը գրուած է լիովին, յատկապէս թէ ինչ պէտք է ընէք Դուք Առաքեալներու գլխաւորին Պետրոսի այս Աթոռին հետ հաղորդակցութիւն գտնելու համար, որմէ դուրս չկայ փրկութիւն. վասն զի, ինչպէս Առաքեալը կ'ըսէ. «Մի է հաւատք, մի մկրտութիւն, մի Աստուած»<sup>6</sup>. զայս անեղծ եւ առանց մոլորութեանց դաւանեցէք միշտ, ինչպէս դաւանած է եւ ունի այս կաթողիկէ հռոմէական սուրբ Եկեղեցին, համաձայն Քրիստոսի Տեառն մերոյ վարդապետութեան, որ կ'ըսէ Աւետարանին մէջ. «Ես աղաչեցի վասն քո, զի մի պակասեցեն հաւատք քո. եւ դու երբեմն դարձցիս եւ հաստատեցես զեղբարս քո»<sup>7</sup>: Սակայն եթէ Դուք լսէք այն ամէնը, զոր վերոյիշեալ մեծաւորը պիտի հաղորդէ Ձեզ, եթէ խոստանաք պահպանել Նորին Սրբութեան հետ այն դաշնադրութիւնը, զոր ունի այս ազնիւ եւ մեծաթիւ հայ Ազգը Ս. Սեղրեստրոս Պապէն, (տրուած) ի ժամանակս Ս. Գրիգոր Լուսաւորչի. առ այս կը մաղթեմ Ձեզ ի Տեառնէ լոյս, որ կարեւոր է Ձեզ այս ճշմարտութիւնը ճանչնալու եւ ընդգրկելու համար. եւ այլն:

Հռոմ, 19 Փետրուար 1628:

Բոկոտն Կարմեղեանց Մեծաւորին գրուած թուղթն է.

<sup>6</sup> Եփես. Դ. 5:

<sup>7</sup> Ղուկ. ԻԲ. 32: